

ուղղափառ հաւատոյ գրեաց առ մեծ հայրապետն ութերորդ Ռւրբանոս պապն, ներում դաւանութեանն են բանքս այսոքիկ. Դաւանիմ, թէ Սուրբ Հոգին ի Հօրէ եւ ի յՈրդւոյ է յաւիտենական, ունելով զէութիւն եւ զընութիւն իւր ընդ Հօր եւ ընդ Որդւոյ, յերկոցունցն բղխեալ յաւիտենից իբրեւ ի միոյ սկզբնականէ եւ ի միոյ փչմանէ: Նոյնը կը յիշեն Վարդան Արք. Յունանեան (Թուղթ քաջալերական) իբրեւ հանդիպած 1633ին, ինչպէս նաեւ Ստեփ. Ռուբա (Ժամանակագրութիւն, ամ 1631):

Սարգիս դպիր Սարաֆ ԅովհաննէսեան, ինչպէս նաեւ ուրիշ գաւազանագրքեր, կը նշանակեն, թէ Զաքարիա Վ. 1636—1639, Գր. Վ. Կեսարացւոյ մահունէն ետեւ, վերջին անգամ Կ. Պոլսոյ Պատրիարք եղած է. սակայն պարագաները բոլորովին անծանօթ են, ինչպէս նաեւ մահուան ճիշդ թուականը: Ինչպէս կ'երեւայ՝ 1639ին վախճանած պիտի ըլլայ: Այս մասին Հ. Ասատուր յառաջ կը բերէ (Ընդ. Օր. 1901, էջ 93) Սարգիս դպիր ԅովհաննէսեանի խօսքերը: Ասիկայ կը գրէ՝ թէ Զաքարիա Պատրիարք թաղուած է Սկիւտարի գերեզմանատունը, ուր կ'երեւայ դեռ իր գերեզմանը, որուն վրայ թէպէտ տապանաքար դրուած էր, սակայն չէր արձանագրուած: Ղափանցի Գէորգ Վ., որ Կ. Պոլսոյ Պատրիարք եղած է 1751ին, տապանին արձանագրութիւն մը փորել տուած, բայց սխալմամբ նշանակել տուած է ՌԿԶ (= 1617) թուականը, իբր Զաքարիա Վ.ի